Աշակերտական խորհուրդների գործունեությունը Հայաստանում.

քաղաքականության վերլուծություն

Վիգեն Շիրվանյան

Երեւան 2013

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N.…:

Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Ներածություն

> *«Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգեւոր, ֆիզիկական եւ սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձեւավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը եւ մասնագիտական կրթության նախապատրաստմանը»:*
>
> ***Հանրակրթության մասին ՀՀ օրենք***

Որպես ՀՀ քաղաքացի՝ դպրոցն ավարտողը պիտի կարողանա հասկանալ ժողովրդավարական հասարակության նորմերը եւ կարողանա ակտիվորեն մասնակցել այդ հասարակության զարգացման գործընթացին:

Աշակերտական խորհուրդները դպրոցում քաղաքացիական կրթության կարեւորագույն տարրերն են. դրանք հնարավորություն են տալիս ստեղծելու ինքնավար աշակերտական մարմին եւ ակտիվորեն մասնակցելու դպրոցի ժողովրդավարական կառավարմանը, համայնքի կյանքին: Հայաստանում, թեեւ

օրենսդրությունը լայն իրավասություններ է տալիս աշակերտական խորհուրդներին, այդուհանդերձ, դրանք հիմնականում ձեւական բնույթ են կրում, հաճախ դառնում են դպրոցական ղեկավարության կամակատարները: Դրանք հիմնականում սահմանափակվում են մշակութային ու սպորտային միջոցառումների կազմակերպմամբ:

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդներ: Իհարկե, որակական մասը գերիշխում է. անցկացվել են հանդիպումներ ու հարցազրույցներ փորձագետների, դպրոցների տնօրենների, փոխտնօրենների ու կազմակերպիչների, ինչպես նաեւ ԱԽ անդամների հետ: Աշակերտների հետ զրույցների մեծ մասը եղել է խմբային եւ առանց տնօրենության կամ ղեկավարության ներկայության՝ անկաշկանդ մթնոլորտ ապահովելու համար:

Կազմակերպել ենք երկու ընդհանուր հանդիպում-քննարկում, որոնցից առաջինը Արմավիրի մի քանի գյուղերի դպրոցների ԱԽ-ի ներկայացուցիչների հետ, իսկ մյուսը՝ ավելի մեծ մասշտաբով, մի քանի մարզերի թվով 20-ից ավելի դպրոցների ԱԽ ներկայացուցիչների հետ՝ Երեւանում: Այս վերջին քննարկում-կլոր սեղանին ներկա են եղել ուսուցիչներ, փորձագետներ եւ տնօրենությունների անդամներ:

Հիմնախնդրի էությունը

Աշակերտական խորհուրդների եւ դպրոցական մյուս խորհուրդների գործունեությունը հստակեցվել է 2009թ. ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, բայց դեռ «Կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագրում» էր նշվում ուսումնական հաստատությունների կառավարման ժողովրդավարացման անհրաժեշտությունը: 2011թ. հաստատվել է նաեւ «ՀՀ Հանրակրթական Ուսումնական Հաստատություն» ՊՈԱԿ-ի Աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը Աշակերտական խորհուրդները նույնիսկ կարող են Օրինակելի կանոնադրությանն առանց հակասելու ստեղծել իրենց սեփական կանոնադրությունը:

ԱԽ-ներին կարող են անդամակցել 6-12-րդ դասարանների աշակերտները: ԱԽ-ները ձեւավորվում են ընտրությամբ, որը մի կողմից ժողովրդավարական գործընթաց կազմակերպելու եւ աշակերտների ձայնը լսելի դարձնելու հնարավորություն է տալիս, մյուս կողմից հաճախ արտացոլում է Երկրի քաղաքական ընտրությունների պատկերը, երբ ճնշումներ ու միջամտություններ են լինում. այդ քաղաքական օրինազանցություններից շատերն էլ տեղի են ունենում հենց ընտրական տեղամասերի

վերածված դպրոցներից ներս, ինչը չի կարող հետեւանքներ չունենալ ներդպրոցական ժողովրդավարության վրա:

Տնօրենության դերը մեծ է ԱԽ-ների կայացման հարցում: Մեր ուսումնասիրությունները փաստում են, որ այն դպրոցներում, որտեղ նրանք ստեղծել են բաց, ազատ ու թափանցիկ միջավայր եւ աջակցում են աշակերտներին, ԱԽ-ները հաջողություններ են գրանցում, իսկ դպրոցներում, որտեղ տնօրենները փորձում են ղեկավարության կցորդ դարձնել ԱԽ-ներին, դրանք չեն կարողանում ազատորեն գործել:

Այս առումով մեծ աշխատանք է իրականացվել Սյունիքի մարզում, որտեղ Գործընկերություն եւ Ուսուցում (ԳՈՒՄ) ՀԿ-ն Կրթության Ազգային ինստիտուտի հետ համատեղ վերապատրաստման դասընթաց է մշակել, որի առաջին փուլն իրականացվել է, սակայն շարունակություն չի ունեցել. տնօրենները, վերապատրաստում անցնելուց հետո պիտի իրենց հերթին նոր հմտությունները փոխանցեին դպրոցների անձնակազմներին ու ԱԽ-ներին, ինչը կամ թերի է իրականացվել, կամ էլ բնավ չի իրականացվել:

Կարեւոր է նաեւ ԱԽ-ների գործունեության ոլորտի ճշտումն ու աշակերտների կողմից իրենց իրավունքների գիտակցումը:

ԱԽ Օրինակելի կանոնադրության մեջ որպես ԱԽ իրավասությունների 1-ին կետ նշվում է, որ այս մարմինը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է



դպրոցի խորհրդի ու մանկավարժական խորհրդի նիստերին՝ աշակերտներին վերաբերող ուսումնական հարցերի, արտադպրոցական ու արտադասարանային աշխատանքների կազմակերպման (կետ 39, 1-ին ենթակետ), աշակերտների կարգապահական հարցերի (կետ 39, 1-ին ենթակետ) քննարկումներին, մասնակցում է համայնքային ծրագրերի իրականացմանը (կետ 39, 1-ին ենթակետ) եւ առաջարկություններ ներկայացնում տնօրենությանը ներքին կարգապահության, հանգստի ու ժամանցի կազմակերպման, դպրոց-ընտանիք կապի ամրապնդման եւ այլ հարցերի վերաբերյալ (կետ 40):

Սակայն փաստացի, ԱԽ-ները գրեթե դեր չեն խաղում դպրոցի կառավարման գործում:

Ավելին, մեր հարցումները, որոնց պատասխանել է 150 աշակերտ, ցույց են տվել, որ ԱԽ-ն նախ եւ առաջ համարվում է կազմակերպչական մարմին՝ ներդպրոցական միջոցառումներ կազմակերպելու: Մեր այցելած դպրոցներում հենց ԱԽ-ի մշակութային միջոցառումների բազմազանությունն էին բերում որպես կառույցի հաջողության փաստ եւ օրինակ: Ավելին, դպրոցի սահմաններից դուրս նայելու եւ համայնքի համար որեւէ բան անելու մասին շատ քիչ աշակերտներ են մտածում: Այդպիսիք են օրինակ Լեռնագոգ գյուղի դպրոցի ԱԽ-ն, որ կարողացել է ՏԻՄ ներկայացուցիչների առջեւ բարձրացրել գյուղի լուսավորության հարցն ու հասել են հաջողության: Մեկ այլ գյուղում՝ Քարակերտում, ԱԽ-ն իրականացնում է ծերերի խնամքի ծրագիր, իսկ օրինակ Մարց գյուղում աշակերտական խորհրդի անդամները ակտիվորեն ներգարվված են գյուղում կառուցվող ՀԷԿ-ի դեմ էկոլոգիական պայքարին:

Հաջողված օրինակ է նաեւ Գյումրու 8-րդ դպրոցի ԱԽ-ն, որտեղ աշակերտական խորհուրդներն իրենց նախագահով շատ ակտիվ ու օրինակելի աշխատանք են կատարում:

Եզրակացություններ եւ գործնական առաջարկություններ

Ուսումնասիրության հիմնական հարցին պատասխանելով պիտի եզրակացնենք, որ թեեւ կան հրաշալի պատանիներ, լավ աշխատանք տանող ԱԽ-ներ, ընդհանուր առմամբ աշակերտական խորհուրդները արդյունավետ չեն գործում:

ԱԽ-ների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար ներկայացնում ենք մի քանի գործնական առաջարկություններ:

1. ԱԽ հաշվետվությունները դարձնել կիսամյակային: Դրանք պետք է հանձնվեն ոչ միայն տնօրենին, այլ փակցվեն դպրոցի պատին եւ դրվեն դպրոցի ինտերնետային կայքում:

2. Անցկացնել աշակերտական խորհուրդների տարեկան համագումարներ, ամառային ճամբարներ փորձի փոխանակման ու նոր գաղափարների համար:

3. Ավելի աշխուժացնել

7. Դպրոցներում հատկացնել թեկուզ փոքր, բայց սեփական տարածք ու տեխնիկա ԱԽ-ի աշխատանքի համար:

8. Ուսուցիչների եւ տնօրենների վերապատրաստման դասընթացներում շեշտել դպրոցական ինքնավար խորհուրդների, դպրոցների ժողովրդավարական կառավարման թեմաները:

9. Խրախուսական մեթոդներ մշակել ոչ միայն ԱԽ-ների, այլեւ դպրոցների տնօրենների համար, ովքերը ավելի շահագրգռված կլինեն աջակցելու ԱԽ-

տարրական դասարանների երեխաների խնդիրներով զբաղվող ԱԽ հանձնաժողովների աշխատանքը: Հնարավորինս ներգրավվել ցածր դասարանների աշակերտներին (1-5-րդ դասարաններ):

4. Սահմանել դպրոցի կառավարման խորհրդի նիստների նվազագույն թիվը, որոնց ԱԽ-ն պիտի մասնակցի:

5. Երկու տարվա ընթացքում փորձարկել ԱԽ ակումբներ ձեւավորելու տարբերակը տվյալ համայնքի դպրոցների համար: Դպրոցական ԱԽ ներկայացուցիչները ձեւավորում են համայնքային աշակերտական ակումբ, որը համայնքի մակարդակով է միջոցառումներ իրականացնում:

6. Ավելի մեծ տեղ տալ հասարակագիտություն առարկայի գործնական աշխատանքներին, որոնք կբարձրացնեն աշակերտների քաղաքացիական գիտակցությունը, հնարավորություն կտան փորձ ձեռք կբերել քաղաքացիական-հասարակական ակտիվության ասպարեզում;

ներին:

10. Մշակել հանրակրթության շրջանակում քաղաքացիական կրթության հայեցակարգ՝ մատնանշելով գերակա ուղղություններն ու իրականացվելիք միջոցառումների ժամանակացույցը:

11. Կիրառել միջազգային փորձը ԱԽ-ի՝ համայնքի հետ կապող օղակ լինելու: Սա հնարավորություն կտա աշակերտներին ներդպրոցական խնդիրներից վեր բարձրանալ ու դպրոցական տարիքից ներգրավվել համայնքային նշանակության ձեռնարկներում:

12. ԱԽ-ի կառավարման համակարգը դարձնել խորհրդարանական: Դա մեծապես կպակասեցնի տնօրենության կամ ուսուցիչների ներգրավվածությունը, ա զ դ ե ց ո ւ թ յ ո ւ ն ը աշակերտական խորհրդի ղեկավարի ընտրություններին, քանի որ կլինեն տարբեր հանձնախմբեր իրենց պատասխանատուներով: